ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Նկատի ունենալով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը ենթակա է մերժման՝ դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 362-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Արտաշատի ԷՑՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Ճանապարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Շանթ-Սեյրան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունիի համայնքի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ «ՎՄՎ Քամփնի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ կոնսորցիումի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասով գնահատող հանձնաժողովի արձանագրությունը (որոշումը), որպես հետևանք՝ «ՎՄՎ Քամփնի» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, Կոնսորցիումի հայտը բավարար գնահատելու և հաղթող ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**